ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2021թ. նոյեմբերի 11-ի
N 469-Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ
_____ Մ. Պողոսյան

Կազմված է 11.11.2021թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 22.01.2003թ.
Գրանցման թիվ-18.210.00570
ՀՎՀՀ 09202247
22.11.2017 թ. գրանցված կանոնադրության
Թիվ 01/006 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
«18» 01 2021թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Գորիսի Յու. Բախշյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 41-րդ կետում «առնվազն վեց անդամ» բառերը փոխարինել «առնվազն երկու երրորդը» բառերով.

2) 42-րդ կետում «փակ» բառը փոխարինել «բաց» բառով.

3) 43-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43.1-ին կետով.

«43.1. Տնօրենի ընտրության ժամանակ սույն կանոնադրության 80-րդ կետի 1.1-ին ենթակետում և 102-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված քվեարկության արդյունքները պարտադիր են մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված դպրոցի խորհրդի անդամների համար: Ծնողական և մանկավարժական խորհուրդների՝ կառավարման խորհրդում առաջադրած անդամները, խորհուրդների կողմից քվեարկության արդյունքում ձայների հավասարությամբ պայմանավորված՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար

տվյալ մրցույթի ժամանակ թեկնածու չառաջադրելու դեպքում, ազատ են իրենց քվեարկության ժամանակ:».

4) 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի *թափուր տեղի հավակնորդի ներկայացրած* զարգացման ծրագիրը.».

5) 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի *հավակնորդին հավանություն տալու,*».

6) 102-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.

«1.1) քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Գորիսի Յու. Բախշյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված 22.11.2017թ.) բաղկացուցիչ մասը:

Սույն կանոնադրությունը կարված,
համարակալված, բաղկացած է
2 /երկու/ թերթից